

ՎԱՐԱԳ ՆԵՐՍԻՍՅԱՆ

Բանասիրական, գիտ. դոկտոր

ՂԱԶԱՐ ՓԱՐԱԿԵՑԻՆ ԵՒ ԻՐ ԵՐԿԵՐԸ

Ղազար Փարպեցին (մոտ 440-Ջ դ. սկիզբ) Ե դարի հայ պարմագրության վերջին խոշոր ներկայացուցիչն է: Նրա անունով պահպանվել է երկու մեծաթիվ աշխատություն՝ «Պարմություն Նայոց» և «Թուղթ առ Վահան Մամիկոնեան» երկերը: Մարենագիրն ինքը «Նայոց Պարմության» նախաբանում իրեն կոչում է Փարպեցի. «...հասեալ հրաման առ իս *Ղազար Փարպեցի*...»¹: Այսկերպ մարմնագրության մեջ նաև վավերացվել է Արագածոտնի գավառի Փարպի բնակավայրի անվան վաղնջական գոյության փաստը: «Թ-դրում» իր մասին խոսելիս հեղինակը հինգ անգամ փախի է իր անունը սոսկ «Ղազար» ձևով՝ առանց ծննդավայրը շեշտելու:

Ի փարբերություն դարի մյուս հայ պարմագիրների, որոնց ժամանակը հայագիտական ուսումնասիրություններում վիճարկվել է, երբ ու առաջ փարվել, Ղազար Փարպեցու ապրած շրջանը՝ Ե դարի երկրորդ կեսը, երբեք կասկած չի հարուցել:

Ղազար Փարպեցին պարսկական հասակից սնվել և դաստիարակվել է Գուգարաց աշխարհում՝ Աշուշա բդեշխի փան, խաղընկեր ու սննդակից ունենալով Նայասրանի ապագա մարզպան Վահան Մամիկոնյանին և նրա եղբայրներին: Գուգարաց աշխարհում էլ Ղազարը հոգևոր կրթություն է ստացել Վահանի մորեղբոր՝ կրոնական գործիչ, Սահակ-Մեսրոպյան դպրոցի նախկին աշակերտ Ադան Արծրունու մոտ: Այնուհետև Ադան Արծրունու օժանդակությամբ նա հնարավորություն է ունենում հիմնավոր կրթություն ստանալու Կոստանդնուպոլսում: Նայենիք վերադառնալուց հետո՝ որոշ ժամանակ նա բնակվում է Կամսարական իշխանների մոտ՝ Շիրակում, իսկ այնուհետև՝ մի-երկու փարի՝ ձմեռ-գարուն, անցկացնում է Սյունիքում:

Նայ իշխանական փրկի հետ Փարպեցու ունեցած մերձավոր շփումները հնարավորություն են տվել ուսումնասիրողներին ենթադրելու, որ նա թերևս ծագումով մերձավոր կամ հեռավոր ազգակցական կապ է ունեցել հայ ազնվական ցեղերից մեկի հետ²:

Երբ մարզպան դառնալուց հետո Վահան Մամիկոնյանը վերականգնում է Վաղարշապատի Կաթողիկե եկեղեցին, փնտրում, գրնում է Ղազարին և նրան բերելով Վաղարշապատ, նշանակվում է վանքի առաջնորդ: Ղազար Փարպեցին բարեկարգում է վանքի գործերը, հիմնում է մարենադարան, կազմակերպում ժամասացություն: Բայց գրնվում են նրա պաշտոնի վրա աչք դրած բանսարկու մարդիկ, որոնք բամբասում-չարախոսում են նրան, մեղադրում զանազան շինծու հանցանքների, նույնիսկ աղանդավորության մեջ, վարկաբեկում նրան մարզպանի աչքում: Չստանալով պաշտպանություն՝ Ղազարը

1 «Ղազարայ Փարպեցոյ Պարմութիւն Նայոց, Թուղթ առ Վահան Մամիկոնեան» (բնագիրն ու աշխարհաբար թարգմանությունը), Եր., 1982, էջ 14: (Այնուհետև սույն հրատարակության էջերը կնշենք շարադրանքի մեջ):

2 **Գրիգոր Խալաթեան**, Ղազար Փարպեցի և գործք նորին, պարմական և գրական քննություն, Մոսկվա, 1883, էջ 4: **Մանուկ Աբեղյան**, Երկեր, հար. Գ, Եր., 1968, էջ 344:

շուրափույթ հեռանում է Միջագետքի հայաշատ Ամիդ քաղաքը, այնպեղ գրում «Թուղթ առ Վահան Մամիկոնեան. մեղադրութիւն սրախօս արեղայից» խորագրով թուղթը, և Նամագասպ Մամիկոնյան երիտասարդ իշխանի ձեռքով ուղարկում մարգպանին (Էջ 444-449):

Սա մի ինքնադիպ ու մեծարժեք փաստաթուղթ է Ե դարի 50-80-ական թվականներին Նայասարանի քաղաքական և հոգևոր-եկեղեցական միջավայրում պարսկական իշխանության հովանավորությամբ ձևավորված ազգադավ հոսանքի բարոյական անկման ու շահարկությունների մասին: Թուղթը հաստատում է Ղազարի անմեղությունը, և մարգպանը երբ է կանչուն նրան, պարվիրում գրել հայոց պարմություն՝ հուշելով, որ շարադրանքն սկսի այն րեղից, որպեղ ավարվում է Փավստոսի Բուզանդի պարմությունը:

Բնութագրելով Նայասարանում պարսկական իշխանությունների վարած քայքայիչ քաղաքականության հետևանքները՝ ակադ. Սրեփանոս Մալխասյանցը գրել է. «Դժվար է ավելի ճարպար ու համոզիչ կերպով բացատրել, թե որքան վնասակար էր այն ուղղությունը, երբ պաշտոն ու պարիվ սրանում էին հավարարացները, իսկ իրենց կրոնին հասարար մնացողները հալածված ու արհամարհված էին, և թե ինչպես այս շահաղիրական հավարարությունը հովանավորելով՝ հերգհերե երեան եկան ու րիրապերեցին բոլոր սրոր բնազդները, իսկ առաքինությունն ու քաջությունը վերացան Նայոց աշխարհից»³:

Անդրադառնալով հակառակորդ հոսանքի արարքներին՝ «Թղթում» բերվում են շար ուշագրավ այնպիսի փաստեր, որ ըստ ամենայնի նպատարավոր են ինչպես րվյալ ժամանակի պարմական իրականությունը հանգամանորեն և ճշմարարպես ճանաչելու, այնպես էլ մարենագրի մշակութաբանական ըմբռնումները բացահայրելու առումով: Այսպես, հիշելով իր հակառակորդների այն խոսքը, թե Ղազարն առաջներում շար համեղ ու գորավոր էր ճառում, իսկ վերջին ժամանակներում՝ վար, Ղազար Փարպեցին գարգացում է այն րեսակերը, թե հաջող բանախոսության համար կարևորագույն նախապայման է ոչ միայն ճառախոսի բնարար շնորհքը՝ ճարարասանական ձիրքը, այլև բանախոսության նկարմամբ ունկնդիրների դրսեորած կենդանի արձագանքը, նրանց անմիջական վերաբերմունքը: Արդ ո՞ւմ համար է ինքն անում իր շնորհարարգև բանախոսությունները: Անշուշտ, ոչ թե իր՝ ասողի, այլ «վասն ունկնդրացն ախորժարութեան և խնդրումոյ» (Էջ 476):

Որպես ցայտուն օրինակ՝ Փարպեցին վկայակոչում է հունական իրականությունը, որպեղ, երբ քարոզիչը ճառախոսելու համար մոբենում է նշանակված րեղին, բոլորը համակվում են սրրարվառությամբ, ...միաձայն աղաչանքներով ու արրասվալից ձայնով թախանձում են Փրկչին. «Տո՛ւր, ասեն, բան, առաքեա՛ շնորհ, դու իսկ ինքն դավա... խօսեա՛ ընդ մեզ. նմա ծանո՛ գհաշրութիւն քո ընդ ծառայս քո: Մի՛ նմանեսցէ դա յաղագս մերոց՝ սրերջ ամբոց. այլ անձրեւահոս բղխմամբ յորդորեսցէ յանդասարանս հոգոց մերոց, որովք ծաղկեալք՝ պրուդք արժանիս հաճութեան կամաց քոց բերեալ մարուցուրք» (Էջ 476-478):

Նման վերաբերմունքի դեպքում, ըստ Փարպեցու, քարոզչի միրքը կարթնանա. «Եւ

3 «Ղազարայ Փարպեցոյ Պարմութիւն Նայոց և Թուղթ առ Վահան Մամիկոնեան», աշխարարիութեամբ Գ. Տըր-Մկրդչեան և Սըր. Մալխասեանց, Տիփլիս, 1904, Յառաջարան, էջ ք:

արդ՝ ո՞ր ուրուք ի քղիւրաց, թող թէ սակաւ մի եւ հեղեղեղաց բանի, ոչ զարթնուցու միարք...» (Էջ 478):

Մինչդեռ բոլորովին այլ է վիճակը հայոց կյանքում՝ իր ուն-կընդիւրների միջավայրում: «Նայոց արեղենքս,- ասում է Ղազար Փարպեցին,- առ դառնաշունչ նախանձու, որ միացեալ է ի սիրտս նոցա՝ գնոցունց հակառակս երկնէն, եւ արդարեւ ըստ ասացածի մարգարէին՝ «Յղանան զցաւս եւ ծնանին զանօրէնութիւն», աղօթս իսկ չառնեն ի վերայ ասողին..., հեղձնուն ի նախանձու» (անդ): Այնուհետեւ Փարպեցին ավելացնում է, թե հայոց արեղաները նըստում են՝ գլխարկները գլուխներին քաշած, երեսները ծածկած, ասես հոլորած դիակի մօտ են՝ համբ դեւերի նման մնում են պապանձված (անդ):

Ղազար Փարպեցին իր «Պարմութիւն Նայոց» երկի շարադրանքն ավարտել է Ե դարի վերջերին կամ Զ դարի սկզբներին: Աշխարհայան նախաբանում հեղինակը հիշում է իրեն նախորդած պարմագիրներ Ագաթանգեղոսին եւ Փավստոս Բուզանդին: Նա Ագաթանգեղոսի աշխարհայանը կոչում է «առաջին պարմութիւն», Փավստոսինը՝ «երկրորդ պարմութիւն», իսկ իր գիրքը՝ «երրորդ պարմութիւն» (Էջ 6): Իր գրքի այլ հարվածներում՝ երկու րեղ (Էջ 30 եւ Էջ 84) Ղազար Փարպեցին հիշում է նաեւ Կորյունին, որի շարադրանքը, չլինելով «Նայոց պարմութիւն», չի համարում պարմագրական երկ:

Ոչ առանց հիմքի ենթադրվում է, որ Ղազար Փարպեցին ձեռքի րակ ունեցել եւ օգտագործել է նաեւ հայերեն այլ աղբյուրներ, որովհետեւ մի րեղ նա վկայում է, թե իր պարմութիւնը գրելուց առաջ ընթերցել է հայոց հին պարմագիրների բազում գրվածքներ. «Ընդ բազում ճառս մարենից առաջնոցն պարմագրացն Նայոց անցի, յորոց ըստ յերկար ընթերցողութեան գրի ի նոցանէ զժամանակաց եւ զդարուց աշխարհիս Նայոց բազմադիմի յեղափոխութիւնս...» (Էջ 8):

Ինչպես արդեն դիտել է, Ղազար Փարպեցու հիշարակած երեք հեղինակների երկերը դեռ բազում չեն⁴:

Տնարավոր է, որ պարմագրի ընթերցած բազում մարչաններից են եղել նաեւ Մովսէս Խորենացու «Նայոց պարմութիւնն» ու մանավանդ՝ Եղիշէի «Վասն Վարդանայ եւ Նայոց պարերագմին» մարչանը⁵, որոնք, ըստ երեւոյթին, Փարպեցին անվանապես չի մարնանշել սոսկ այն պարճառով, որ դրանք Նայոց պարմութիւն ժամանակագրական հաջորդականության դիարակերպից մնում էին մեկուսի եւ չէին դիտվում Ագաթանգեղոս-Բուզանդ համակարգի շարունակութիւն: Այդպիսին նա համարում է իր պարմութիւնը՝ կոչելով այն, ինչպես ասվեց, երրորդ պարմութիւն:

Ղազար Փարպեցին առանձնապես բարձր է գնահատում Ագաթանգեղոսի աշխարհայանը, հեղինակին կոչելով «երանելի... այր բանիբուն գիտութեամբ եւ լի ամենայն

4 Մանուկ Աբեղյան, Երկեր, հատ. Գ, Էջ 355:

5 Օրինակ, նորագույն ուսումնասիրողներից Արեւր Մուշեղյանը մի շարք փաստերի լուրջ վերլուծութեամբ հասարարում է Ղազար Փարպեցու պարմութիւն երկրորդ դրվագի կախումը Եղիշէի «Վասն Վարդանայ եւ Նայոց պարերագմին» երկի բնագրից: Այս մասին րեն «Արագածոտն. հոգեւոր եւ մշակութային ժառանգութիւն» հոբելյանական գիտաժողովի հիմնադրութեւր», Օշական, 2003, Էջ 81-82:

հրահանգի, ըստուգաբան ի կարգադրություն ճառից և յարմարագիր ի պատմությունս ասացուածի իւրոյ» (Էջ 8):

Ազաթանգեղոսի գրքի մասին Ղազար Փարպեցին հայտնում է, թե հայոց առաջին պատմությունը նկարագրում է Նայոց երկրի դարձը՝ «ի ձեռն սրբոյ նահապակին Գրիգորիսի, յորոյ անուն ևս զգիրսն անուանեալ կոչեն Գրիգորիսի» (Էջ 6):

Անշուշտ, սույն քաղվածքը հիմք չի տալիս ընդհանրացնելու, թե Ազաթանգեղոսի պատմությունը սկզբնապես կրել է «Գիրք Գրիգորիսի» խորագիրը: Ամենայն հավանականությամբ, ինչպես և ենթադրվում է նաև «կոչեն» հոգնակի ձևից, պատմությունն այդպես է անվանվել առօրյա կենցաղային միջավայրում, սոսկ բանավոր խոսքի մեջ՝ իբրև շրջատություն, քանի որ գիրքը հիմնականում վերաբերել է Գրիգոր Լուսավորչի կենդանի մարտիրոսությանը, նրա կրոնական ու եկեղեցական գործունեությանը:

Փավստոսի գրքի կապակցությամբ Ղազար Փարպեցին դրսևորում է խստահայաց քրնադատական վերաբերմունք: Ամենայն հավանականությամբ տվյալ մտքեցման պատճառը Բուզանդի շարադրանքի ժողովրդական ոճն է, որը կենդանի լեզվին բնորոշ դարձվածներով, իսկ տեղ-տեղ էլ անհարթություններով զգալիորեն զարվում է դասական բարձրաճաշակ հայերենից, և իհարկե, նաև որոշ գլուխներում տեղ գրած «բաց» նկարագրությունները, որոնք Փարպեցին որակում է «բանք ինչ ոչ յարմարք ևս դիպողք», «անհաճոյս լսողաց բանս» ձեռակերպումներով (Էջ 10):

Ըստ էության՝ Ղազար Փարպեցին առաջինն է, որ զբաղվել է Փավստոսի անձնավորության և նրա անունով մեզ հասած պատմության հեղինակի խնդրով: Անվերապահորեն ստույգ համարելով Փավստոս անունը կրող անձնավորության բյուզանդացի պատմագիր լինելը՝ Ղազար Փարպեցին փորձել է գրքի հեղինակի առեղծվածը պարզաբանել երկու հնարավոր ենթադրությամբ:

Առաջին՝ քանի որ գրքում կան լսողներին անհաճո բաներ, ուրեմն գրքի հեղինակը լուսավորության և առաջադիմության կենտրոն Կոստանդնուպոլսում կամ Բյուզանդիոնում կրթություն ստացած Փավստոսը չէ, այլ մի անհայտ ոք, որ հանդուգն, անթույլատրելի բառ ու բանով (անհրահանգ բանիւ) գրել՝ ինչ թելադրել է կամքը:

Երկրորդ՝ հնարավոր է, որ Փավստոս Բյուզանդացու պատմությունը ընկել է հանդուգն ու անկիրթ մեկի ձեռքը, որը փոփոխություններ կատարելով՝ վնասել է շարադրանքը և իր անխռին սխալները վերագրել Փավստոսին. «Արդ յայնպիսումն քաղաքի ևս ի մէջ այնչափ բազմութեանն ուսելոյ վարժեալ այրն Փավստոս այնպիսի ինչ արդեօք անհաճոյս լսողաց բանս կարգէր ի պատմութեան իւրում: Քան և մի՛ լիցի: Ուստի ևս անհաւարալի իմում տկարամտութեանս կարծեցեալ գործն՝ ասեմ, թէ գուցէ այլ ոք յանդուգն ևս անհրահանգ բանիւ լրբաբար ձեռն արկեալ յիւրն՝ գրեաց զինչ պէտք ըստ կամի. և կամ զի ուրոք անկարեալ դիպողս այլաբանեալ վնասեաց, ևս անուամբ Փավստոսին զիւրոյ յանդգնութեանն սխառալս համարեցաւ ծածկեալ...» (Էջ 12):

Եւ Փարպեցին հիշում է, որ թե՛ Նունաստանում և թե՛ մանավանդ Ատրիքում շարերը

մերթընդմերթ գայթակղվել են այդ արարածով, քանզի ու հանդուգն մարդիկ գրել են սին, անպարտք գրվածքներ ու ներմուծել գիտուն մարդկանց երկերի մեջ (անդ):

Ղազար Փարպեցին «Պարմություն Տայոց» աշխատությունը գրել է Տայասարանի մարզպան Վահան Մամիկոնյանի հանձնարարությամբ: Խոսելով գրքի սրբազան գործում պարզապես կարարած դերի մասին՝ հեղինակը նշում է, որ Վահան Մամիկոնյանը «պարզաձ համարեցաւ ի մնացեալ սրբոյ երկրորդ գրոցն (Փալստոս Բուզանդի գիրքը) աճեցուցանել յառաջ եւ գրել յայնմհետք գեղեալս աշխարհիս Տայոց» (էջ 14):

Սույն վկայությունը ցույց է տալիս, որ Բուզանդի գրքի ավարտման փուլից (Պարսկաստանի եւ Բուզանդիայի միջև Տայասարանի բաժանման շրջանից) պարմություն գրելու գաղափարը Ղազար Փարպեցուն հուշել է Վահան Մամիկոնյանը: Փալստոսի աշխատությունը հիմնականում ժողովրդական գրույցների, վիպական հերոսական պարմունների հենքի վրա լայն փուլ է հարկացնում Մամիկոնյան փոքրիկ անձանց քաջություններին: Դրանով Բուզանդի գիրքը, հասկանալի է, մի մեծարժեք սիրված մարդան էր հարկապես Մամիկոնյանների համար:

Ղազարին փալով պարմություն գրելու հանձնարարություն, ամենայն հավանականությամբ, Վահան Մամիկոնյանը նրան հայտնել է նաեւ իր փալիզը՝ Փալստոսի շարադրանքին համահունչ հերոսական գրույցների ոգով եւ ընդգծված շեշտադրությամբ ներկայացնել Մամիկոնյան փոքրիկ ներկայացուցիչների, նրանց մերձավորների խաղացած դերը երկրի ազատագրական պայքարում, մանավանդ որ գրքում ընդգրկելի ժամանակների ազգային նշանավոր գործիչները հիմնականում դարձյալ Մամիկոնյաններն էին եւ Վահանին արյունակցությամբ ու գաղափարներով մոտ կանգնած անձինք՝ Սահակ Պարթև, Վարդան Մամիկոնյան, Կամսարական իշխաններ, այլ համակամ-համախոհներ, նաեւ ինքը իր եղբայրների հետ:

Եւ Վահան Մամիկոնյանի ցանկությունը՝ իրեն եւ իր մերձավորներին ըստ ամենայնի մեծարող, հարեւիքին Մամիկոնյանների մարտուցած բացառիկ ծառայությունները գնահատող երկը սրբազան է:

Բայց եթե նույնիսկ Ե դարի 90-ական թվականներին Վարդանանց եւ Վահանանց ապստամբական շարժումների վերաբերյալ ձեռավորված լինեին ժողովրդական հերոսական գրույցներ, այնուամենայնիվ այդ դեպքում եւս Ղազար Փարպեցին սկզբունքորեն անկարող կլիներ շարադրել Բուզանդի պարմության նման մի նոր մարդան: Ինչպես իրավացիորեն նշել է Մանուկ Աբեղյանը, Ղազարը հետևող էր «հունական գուսպ դպրությանը, բնականի սահմաններից դուրս չեկեղ արվեստին» եւ «նա ուրիշ կերպ էր ըմբռնում գործը...»⁶: Փարպեցու խորին համոզմամբ պարմագրական աշխատությունը պետք է ունենա խոսքի հարմար կառուցվածք, շարադրված լինի կանոնավորված գիտության օրենքի համաձայն» (ըստ հրամանի կանոնադր գիտութեան), պարսավանքի չարժանաբալու համար սպուգագրությունը գիտուն ունկնդիրների ականջներին մարտուցի ականաձանքով:

⁶ Մանուկ Աբեղյան, անդ, էջ 353-354:

Անհրաժեշտ է չավելացնել սուր բաներ, չնվազեցնել եղածները և դրանք անփույթ խոսքով կիսար-պոսար չպարմել, այլ ամեն բան երևան հանել ողջախոհ զգուշությամբ (Էջ 16):

Պարմության նախաբանում Փարպեցին առաջ է քաշում մա-պենագրական երկի դասարարակչական նշանակության խնդիրը, որին, ի դեպ, առանձնակի ուշադրությամբ անդրադարձել են նաև մեր գրեթե բոլոր պարմիչները. «Բազում զգուշութեամբ գրել և կարգել մի ըստ միոջէ՛ զամենայն զեղեւորացն զառաքինութիւնս և զարանց քաջաց զլաւութիւնն, որպէս զի զեղեւորացն զբարի վարսն լուեալ բազմութեան ժողովրդոցն՝ նմանողք լինել ցանկասցին մարդիկ ճգնութեանց նոցա, և քաջքն լսելով զայլոց զգործսն յառաջագոյն քաջացելոցն՝ յաւելեալ զանձանց քաջութիւն՝ անուանի յիշարակ թողցեն զկնի իրանց՝ անձանց և ազգի: Իսկ ծոյլքն և վարքն հայելով յանձինս և լսելով զայլոց զպարստաւանս՝ ի բարի նախանձն կրթեալք ջանասցին լաւանալ» (Էջ 14):

Ղազար Փարպեցու Պարմությունը կազմված է երեք դրվագից: Ճանաչողական առանձնակի նշանակություն ունի հարկապես երրորդ դրվագը, որը նվիրված է Սասանյան բռնապետության դեմ Ե դարի 80-ական թվականների առաջին տարիներին Արեւելյան Հայաստանում Վահան Մամիկոնյանի գլխավորությամբ տեղի ունեցած ապստամբության մանրամասն արքայացոլմանը: Գրքի այս դրվագը դեպքերի ժամանակակցի շարադրած միակ սկզբնաղբյուրն է և գլխավորապես այս հանգամանքով է պայմանավորված աշխատության բացառիկ արժեքը:

Ոսկեդարի վերջին ականավոր մարենագրի երկը միաժամանակ մի ինքնատիպ գրական հուշարձան է, որ շարադրված է սրելոծագործական ակնհայտ ավյուրով ու խոսքարվեստի լիակատար զգացողությամբ: Նրա գրքում ընթերցողը գտնում է բնության, ռազմական գործողությունների, մարդկային բնավորությունների նկարագրություններ՝ երևույթների նկարմամբ հեղինակային մտրեցումների հարակ դրսևորումներով: Մասնավորապես հիշարժան է Արարաբյան գավառի ծավալուն նկարագրությունը, որը կամա թե ակամա վերածվում է հայ բնաշխարհի արգասաբեր դաշտերի, կենդանական և բուսական հարսությունների փառաբանության:

Մեծ Հայքի Արշակ Երրորդ թագավորը, չհանդուրժելով Սասանյան Պարսկաստանի գերիշխանությունը, անհուն վշտով ու բեկված սրտով լքում է իր նախնյաց բնօրրանը՝ «զգաւառն Արարատու, զհոյակապն և զեղեւորաւորն, զամենաբոյսն, զամենաբուրդին, զամենալին, զամենագիւրն ի շահս և ի դարմանս մարդկային պիտոյիցս կենաց և վայելչութեան զդաշտ մեծաւարածս և որսալիցս, զերինս շորջանակի գեղեցկանիստս և պա-րարտարօտս... Յորոց ի վերոստ ի կարարացն ջրոց հոսմունք, անկարօտ ռոգզման արբուցանելով ըզդաշտս՝ մարակարարէ անբաւ բազմութիւն հացի և գինույ, զանուշահոտ զմեղրահամ քաղցրութիւն բանջարացն...: Անդ գրանին և ազգի ազգի արմատք բուսոց ի պէտս օգրակարութեան դեղոց, ըստ ճարտարագէտ ճանաչողութեան ստուգանմութիւն ըժշկացն յօինուածոցն, երագահաս ախտահալած սպեղանիք, և կամ արբմամբ՝ յերկարելոցն ի ցաւս պարտահացուցանեն առողջութիւն» (Էջ 20-22):

Պարմիչի գրչի տակ նեկայացվող անձինք սովորաբար հանդես են գալիս իրենց ուղղակի

խոսքով, մրաժմունքներով, արարքներով ու քաղաքական կողմնորոշումով: Ամեն կերպ ընդգծելով Վահան Մամիկոնյանի ազգային պարվախնդրությունն ու ազապասիրական ոգին, հայրենասիրությունն ու խաղացած բացառիկ դերը հայության ազապագրական պայքարում՝ հեղինակը դիմում է նաև սրելոժագործական երևակայության: Արդյունքում Վահան Մամիկոնյանի անձը հասցվում է գրական կերպավորման ասպիճանի: Յույց է արվում, որ Վահանն իր փոքրաթիվ գորախմբով թըշնամու դեմ մշտապես մղում է մրաժված, զգուշավոր:

Բայց երբեմն Վահանը, երբ չնախարկված հանգամանքների բերումով ընկնում է ծանր կացության մեջ, ընդունակ է դիմելու անօրինակ խիզախության: Մի հանկարծադեպ ընդհարման ժամանակ, երբ նա հայտնվում է պաշարման մեջ, մերժելով յուրայիններից մեկի իրեն ուղղած կոչը՝ լինել խիստ զգուշավոր, նա իր հեղեկած սակավաթիվ մարդկանցով քաջաբար ներվում է պարսկական զորքի մի թևի վրա և շեշտակի հարվածով ճեղքում շղթան: Վահանի և նրա զորքի ահավոր, աներկյուղ վճռից ապշած պարսից զորապետ Շապուհը շտապ լուր է հղում հայազգի դավաճան իշխան Գդիհունին օգնության հասնել: Եւ Գդիհունը Շապուհի կանչից ուրախացած, որ մասնակցելու է Վահանի կործանմանը, շուրափույթարշավում է պահանջված փողը: Իսկ «զօրավարն Նայոց Վահան Մամիկոնեան, հանդերձ ընդ իւր միասիրտ սակաւ արամբք, օգնութեամբ աջոյ Նգորին յարձակեալ՝ հերձանէր գրովանդակ գունդն Պարսից, որպէս յորդանասանք բազմութիւնք ջրոց, որ հեղեղարեն գերկիր և անցանէն: Եւ ինքն հզօրաբար քաջ ուխտակցօղքն նման առիւծու ընդ մէջ ամենեցուն յայնկոյս ելանէր. և սպանեալ...բազում արս հզօրս պարերազմողս ի զօրացն պարսից՝ հարեալ խոցէին նիզակաւ ընդ անուր լարելիք և զհպարտ իշխանն Գդիհուն, և զահառորալոր ամբոթիւնն զինուն, յոր պանծացեալ յուսար անօրէնն՝ ցելեալ վեր ի վայր թափ ընդ լեարդն զնիզակապեղն հասուցանէին» (Էջ 368-370):

Ըստ պարմագրի՝ Վահանն իր անվեհեր քաջությամբ այնպիսի ցնցող փափավորություն է գործել հակառակորդի վրա, որ պարսկական զորքը ահավոր սարսափից նույնիսկ չէր համարձակվում բաց հայացքով նրա կողմը նայել. «քանզի այնպէս արկեալ էր Աստուծոյ զաւ և զեկիւղ զօրավարին Նայոց Վահանայ Մամիկոնէի ի վերայ զօրացն պարսից, զի կարծէին, թէ ի հայեցումս լոկ առն Մամիկոնէի և յարանցն որ ընդ նմայն էին՝ չգերձանիցին առանց վրբանգի» (Էջ 372):

Պարզորոշ նկատելի է պարտմի վիպական բնույթը:

Վահան Մամիկոնյանն օժտված է ազգային արժանապատվության զգացողությամբ: Նայության հասցեին արված անարգանքը անձնական ծանր վիրավորանք է նաև նրա համար: Նա անենելին չի մոռանում Պարսից Պերոզ արքայի բազմիցս թշնամաբար ասած այն խոսքը, թե «Այր վար և գունդ անպիտան Ասորի է, բայց քան զԱսորի այր՝ Նայ մարդ շար վարթար է և անպիտան»: Վահանի ընկալմամբ մահը գերադասելի է, քան երկրի թագավորից նման խոսք լսելը (Էջ 332, Կեն նաև Էջ 268, 406): Եւ նա պարսկական փրկապետության դեմ մղած իր անդուլ պայքարով նաև ջանում է հերքել այդ նվաճաբացիչ կարծիքը:

Վահան Մամիկոնյանի անհատականության կերպավորման առումով կարևոր դրվագ է պարսկական կողմի հեղաշրջություն կնքելու նպատակով Նվարսակ գյուղ մուտք գործելու պահին նրա կարարած հերևյալ արարքը: Սասանյան թագավորությունից փոխառված պահին իր ունեցած անկախությունը նկարել փայտ մրատրոյությամբ պարսկական դեսպան խելամիսր Նիխորի ճամբար մուտք գործելուց առաջ Վահանն իր հեղաշրջումը գործողին հրամայում է հնչեցնել պարերագմական փողերը, որոնց ձայնից Նիխորի մարդիկ, խուճապահար եղած՝ կարծում են, թե Վահանը խաբեությամբ եկել է իրենց կոտորելու: Բայց ծանրաբարո և լրջմիտ Նիխորը հանդարեցնում է յուրայիններին և անմիջապես մարդ է ուղարկում Վահանին ընդառաջ ազդարարելով, թե փող հնչեցնելով Արյաց բանակ մուտք գործելու իրավունքը արքունված է միայն Արյաց սպարապետին: Իսկ Վահանը պետք է պահպանի ընդունված կարգը: Երբ քիչ անց հանդիպում են նրանք, Նայոց գորավարը Նիխորին արժանապալոքեն պարասխանում է. «Նախ արա գիտ Արեաց Տեառն ծառայ, ապա և առանց ի քէն իսկ ուսանելոյ՝ թուի թէ ևս իսկ գիտնմ գԱրեաց աշխարհի գկարգ...» (Էջ 400):

Փարպեցու «Նայոց պարմության» մեջ կա մի շարք հերաբրքրական դրվագ, որտեղ նկարագրված է, թե քաղաքական հանգամանքների կտրուկ շրջադարձի բերումով Նվարսակում պարսիկները հայ ապստամբներին մարտնչում են առանձնակի հյուրասիրություն ու հարգանք, իսկ հավաքուրացների նկատմամբ դրսևորում սառն անպարբերություն: Սրբազան իրավիճակում ապստամբ անունը դարձել էր գերադասելի արժեք: Նայ ուրացողները նույնիսկ սաստիկ փախազում էին ունենալ այդ անունը, բայց դա նրանց փրկում չէր: Ուստի նրանք «ժողովեալ նստէին առ միմեանս ապշեալք, քամակաբեկ, զարթուցեալ որպէս յերագոյ ցնորից գիշերոյ: Եւ ընդ Աստուծոյ զօրութեան գործ զարեւոյեալ ապշէին..., ցանկային բազում գնոց առնուլ... զապստամբութեան անուն, և ոչ ոք փայր նոցա: Վասն զի որ ոք անձանօթիցն կամէր մարանել յարեանն, ի բազմութեանն ասէր ցնուիրակսն, թէ «Յապրստամբացն գնդէն եմ», և վաղվաղակի թողուին ի ներքս...» (Էջ 412):

Սույն հարվածը, որպես մի առանձնակի իրավիճակի նկարագրություն, հայոց հին գրականության եզակի էջերից է:

Նայ միջնադարը Ղազար Փարպեցուն գերազանցապես ճանաչել է որպես պարմագրի: Նրա «Պարմություն Նայոց» աշխատության անդրանիկ փայագրությունը իրականացվել է 1793 թվականին Վենետիկում: «Թողթ առ Վահան Մամիկոնեան» երկի բնագիրը հայտնաբերվել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Մարենադարանում ԺԹ դարի 20-ական թվականներին, բայց այն առաջին անգամ հրատարակվել է Մոսկվայում 1853 թվականին Մկրտիչ Էմինի աշխատությամբ: